ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 379- Ա **22 հուլիսի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N 348-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2016 թվականի հիմնական միջոցառումների պլանի 1.2.1 կետի պահանջները՝

Որոշում եմ՝

1. 2016 թվականի հուլիսի 27-ից 29-ը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում անցկացնել հատուկ տակտիկական ուսումնավարժություն «Գեղարքունիքի մարզի բնակչության պաշտպանությունը հակառակորդի օդուժի հարձակման դեպքում» թեմայով՝ գործնականում իրականացնելով ազդարարման, պատսպարման և տարահանման միջոցառումներ:

2. Հաստատել հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն հավելված 1-ի, հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացման պլանը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հատուկ տակտիկական ուսումնավարժությանը պատշաճ նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով ստեղծել ուսումնավարժության ղեկավարման խումբ հետևյալ կազմով.

- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյան – ուսումնավարժության ղեկավար,
- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյան - ուսումնավարժության ղեկավարի տեղակալ,
- Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարարական ծառայության գնդապետ Էդիկ Գալստյան - ուսումնավարժության ղեկավարի օգնական,

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վահան համայնքի ղեկավար Գուրգեն Բալյան - ուսումնավարժության ղեկավարի օգնական: